ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 օգոստոսի 2024 թվականի N 1259-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 384-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մարտի 14-ի «Բուսաբուծության աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 384-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունը.

1) 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետով՝

«2.1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 27-ի N 772-Ն որոշման հավելվածով հաստատված ցանկում ներառված համայնքներում մոնիթորինգի արձանագրությամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության» ծրագրի շրջանակներում իրականացված ցանքերին

հասցված վնասներից տուժած շահառուներին տրվում է փոխհատուցում սույն ծրագրով հաստատված սահմանաչափերով».

2) որոշման հավելվածի 17-րդ կետում «պատճենները» բառից հետո լրացնել «, իսկ արտերկրից ներկրված սերմերի հավաստագրում նշված ժամկետը լրացված լինելու դեպքում ներկայացվում է նաև «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված սերմերի որակի փորձաքննության արձանագրությունը, որով հավաստվում է, որ սերմացուն համապատասխանում է պետական նորմատիվային փաստաթղթի պահանջներին» բառերով.

3) որոշման հավելվածի 24-րդ կետում «կամ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա բանկային կամ փոստային ծառայության միջոցով» բառերը փոխարինել «, որոնք բռնագանձման ենթակա չեն» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

09.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ